ՀՏԴ 343.3

Դատավորների բարեվարքության հարցերը իրենց համար վարկատու հանդիսացող բանկերի կամ վարկային կազմակերպությունների գործերը քննելիս

Գևորգ Բարսեղյան
Մարինա Մաքյան
Թեհմինե Պապոյան

Հանգուցային բառեր. *վարքագծի կանոններ, անկողմնակալություն, շահերի բախում, նյութական շահագրգռվածություն, հանրային վստահություն, ինքնաբացարկ*

Նախաբան

Սույն հոդվածի նպատակը դատավորների բարեվարքությանն առնչվող հարցերի վերհանումը և հնարավոր լուծումների ներկայացումն է այն պարագայում, երբ վերջիններս քննում են իրենց կամ իրենց հետ փոխկապակցված անձանց համար վարկատու հանդիսացող բանկերի կամ վարկային կազմակերպությունների գործերը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական տնտեսության պայմաններում բանկերի ունեցած դերակատարությամբ դատական իշխանության ներկայացուցիչները ևս անմասն չեն մնում վարկային պարտավորություններից, ինչը վերջին շրջանում բուռն քննարկումների առիթ է դառնում: Խնդրահարույց է այն, պայմանավորված մասնավորապես այն, թե արդյոք դատավորը պետք է ինքնաբացարկ ներկայացնի այն դեպքում, երբ քննում է իր կամ իր հետ փոխկապակցված անձանց համար վարկատու հանդիսացող բանկերի կամ վարկային կազմակերպությունների շահերը շոշափող գործեր:

Սույն հարցի քննարկումն աչքի է ընկնում առանձնակի կարևորությամբ, քանզի ուղղակիորեն կապված է հանրության շրջանում դատական իշխանության նկատմամբ վստահության հետ:

Հոդվածը կարող է օգտակար լինել նմանատիպ դեպքերում գործի հետագա քննության ընթացքը պայմանավորելու, ինքնաբացարկի անհրաժեշտության հարցը քննարկելու տեսանկյունից, ինչպես նաև կարող է հիմք հանդիսանալ սույն թեմայով հետագա գիտական հետազոտությունների համար:

Պատմական փորձը

Մեկ դար առաջ Լորդերի պալատի անդամ Գորդոն Հյուարտը գրել է. «Բազմաթիվ գործերի քննությունը ցույց է տալիս, որ արդարադատությունը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, ուստի այն պետք է ոչ թե պարզապես իրականացվի, այլ հստակ և անկասկած երևա, որ այն կենսագործվում է»[10]: Այս գաղափարը դրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռների հիմքում: Դրա իմաստն այն է, որ արդարադատություն կարող է իրականացվել միայն այն պարագայում, երբ քաղաքացիները վստահում են իրենց դատական իշխանությանը: Ազգային դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահությունն անկյունաքարային նշանակություն ունի. այն ժողովրդավարության հիմնական հենասյուներից է, որը պայմանավորված է դատավորների անաչառությամբ և անկախությամբ:

Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունեն դատավորների բարեվարքությանն առնչվող հարցերը: «Բարեվարքություն» եզրույթը նշանակում է պարտականությունների ազնիվ և լիարժեք կերպով կատարում: Գործընթացն օժտված է բարեվարքությամբ (անխախտ ամբողջականությամբ), երբ ծառայում է իր նպատակին և գործում ավելի մեծ համակարգի սահմաններում, որի մասն է կազմում: Օրինակ՝ կազմակերպությունն օժտված է բարեվարքությամբ, երբ իր գործողություններն իրականացվում են պատշաճ հաշվետվողականությամբ և իրավասությամբ՝ առանց ռեսուրսների որևէ շեղման դեպի անազնիվ, մասնավոր նպատակներ: Բարեվարքությունը սովորաբար չափվում է հաշվետվության ստուգումների և հարցումների միջոցով:

Բարեվարքությունը ստվերվում է շահերի բախման իրավիճակում: Շահերի բախումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ պաշտոնատար անձը, ունենալով անձնական կամ մասնավոր շահեր, դրանք գերադասում է օրենքով սահմանված իր պարտականություններից: Որոշ երկրներ շահերի բախում են որակում ներկայիս, ինչպես նաև հետագայում, այն օգուտները, որ պաշտոնատար անձը կարող է ստանալ, օրինակ, գնման պայմանագրից, երբ տվյալ պաշտոնատար անձն սկսում է աշխատել կամ այլ եկամուտներ ստանալ ոլորտի որևէ մատակարարից որոշակի ժամանակահատվածում՝ պետության հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելուց հետո:

---

[10] European judges and prosecutors facing conflicts of interest, Semi-Final D, Judicial Ethics and Professional Conduct, Omšenie (Slovakia) 26th – 30th June 2016, p. 2.

Շահերի բախման սահմանումը համապարփակ կերպով տրվել է հանրային ոլորտում շահերի բախման հնարավոր իրավիճակները կանխարգելելու նպատակով ստեղծված ֆրանսիական հանձնաժողովի՝ 2011 թվականի հունվարին ներկայացրած զեկույցում: Հիշատակված զեկույցում այն բնորոշվել է որպես պետական ծառայության առաքելության իրականացման և այդ ծառայությունն իրականացնող անձի մասնավոր շահերի միջև բախում, երբ մասնավոր շահը իր բնույթով այնպիսին է, որ կարող է ազդել այդ առաքելության իրականացման վրա կամ հնարավոր ազդեցության ողջամիտ կասկած առաջացնել[11]:

Քննարկվող հարցի կարգավորմանն են ուղղված փափուկ և կոշտ իրավակարգավորումներ նախատեսող միջազգային մի շարք փաստաթղթեր:

Այսպես՝ դատավորի վարքագծի Բանգալորյան կանոններով[12] ամրագրված է, որ անաչառությունը առանցքային նշանակություն ունի դատավորի լիազորությունների պատշաճ իրականացման հարցում: Այդ պահանջը վերաբերում է ոչ միայն դատարանի որոշումներին, այլև որոշման ընդունման գործընթացին:

Բանգալորյան կանոններով պահանջվում է, որ յուրաքանչյուր դատավոր պատշաճ կերպով տեղեկացնի իր և իր ընտանիքի անդամների անձնական կամ ֆիդուցիար ֆինանսական շահերի մասին:

Անաչառության և բարեխղճության գործոնները

Արդարադատության միջազգային դատարանի կարգավիճակի 20-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանի յուրաքանչյուր անդամ նախքան իր լիազորություններն ստանձնելը պետք է հանդիսավոր հայտարարի Դատարանում, որ նա կիրականացնի դրանք անաչառ և բարեխղճորեն:

Այս առնչությամբ ընդունված որոշումներից մեկում Արդարադատության դատարանը արձանագրել է, որ գործը քննելիս դատարանը պետք է ազատ լինի, և ցանկացած պարագայում կարևոր է ստուգել՝ արդյոք նրա դատավորներից որևէ մեկը քննարկվող հարցի կապակցությամբ ունի արտահայտված կարծիքներ կամ դիրքորոշումներ, որոնք տպավորու-

[11] Տե՛ս Commission de réflexion pour la prévention des conflits d'intérêts dans la vie publique, Pour une nouvelle déontologie de la vie publique, presented by Jean-Marc SAUVE, 26 January 2011, էջ 14:

[12] Տե՛ս https://www.icj.org/wp-content/uploads/2015/08/JIG-Measures-effective-implementation-Bangalore-Principles-2010.pdf:

թյուն են ստեղծում, որ նա չի կարող խորհրդատվական եզրակացության մեջ բարձրացված հարցերը դիտարկել արդար և անկողմնակալ, այսինքն՝ որ նա կարող է կանխակալ վերաբերմունք ունենալ մեկ կամ մի քանի հարցերի շուրջ, որոնք վերաբերում են Դատարանում քննվող վեճի առարկային: Արդարադատության պատշաճ իրականացումը պահանջում է, որ արդարադատության կենսագործումը «տեսանելի» լինի: Բոլոր դատարանները պետք է առաջնորդվեն այդ սկզբունքով՝ անկախ իրենց կանոնադրությունների կամ այլ հիմնադիր փաստաթղթերի բովանդակությունից[13]:

Հիշյալ հարցի կապակցությամբ առկա են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կարգավորումներ: Այսպես՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացվում է որևէ քրեական մեղադրանք, ունի օրենքի հիման վրա ստեղծված *անկախ ու անաչառ* դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՄԻԵԴ-ի գործունեության ընթացքում բազմիցս քննարկման առարկա է դարձել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անկողմնակալության և անկախության պահանջների հարցը: ՄԻԵԴ-ը Cubber v. Belgium գործով նշել է, որ ցանկացած դատավոր, ում անկողմնակալության առնչությամբ առկա են հիմնավոր կասկածներ, պետք է ինքնաբացարկի որոշում կայացնի, քանի որ վտանգում է հանրության շրջանում դատական իշխանության նկատմամբ վստահությունը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակությանը[14]:

Hauschildt v. Denmark գործով Դատարանը նշել է. «…. Դատավորի անկողմնակալության պահանջի պահպանումը պետք է ստուգվի սուբյեկտիվ և օբյեկտիվ թեստի միջոցով, այսինքն՝ կոնկրետ դատավորի՝ քննվող գործի առնչությամբ ծագած ներքին համոզմունքը և դատավորի կողմից իր կողմնակալությունը բացառող բավարար երաշխիքներ ներկայացնելու հանգամանքը պարզելու միջոցով: Օբյեկտիվ թեստի շրջանակներում պետք է պարզվի, թե արդյոք դատավորի վարքագծից բացի առկա՞ են

[13] Տե՛ս International court of Justice, Construction of a Wall Dissenting Opinion of Judge Buerganthal (Order of 30 January 2004 was decided by 13 votes to 1):

[14] Տե՛ս Cubber v. Belgium, Judgment of 26 October 1984, Eur. Ct. H.R., Series A, պար. 31:

հավաստի հանգամանքներ, որոնք կարող են կասկածներ առաջացնել նրա անկողմնակալության առնչությամբ: Այս առումով, նույնիսկ արտաքին տեսքը կարող է ունենալ որոշակի նշանակություն (…)[15]»:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախումը բնորոշում է որպես հանրային ծառայողների հանրային պարտականության և մասնավոր շահերի բախում (անհամապատասխանություն), որը ծագում է հանրային ծառայողի մասնավոր հնարավորություններից բխող շահերից, որոնք կարող են ոչ պատշաճ կերպով ազդել նրա պաշտոնեական լիազորությունների և պարտականությունների կատարման վրա[16]:

Հիշյալ խնդրի առնչությամբ հետաքրքրական է Եվրոպական իրավագիտական ասոցիացիաների խորհրդի զեկույցը, որում, մասնավորապես, ասվում է, որ դատավորները, կարևորելով անկողմնակալության արժեքը, պարտավոր են համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ կանխելու դատավորի հատուկ կարգավիճակից բխող լիազորությունների և իրենց հանրային կյանքի միջև շահերի բախումը: Եթե առկա է շահերի բախման ողջամիտ կասկած, դատավորը պարտավոր է ինքնաբացարկի որոշում կայացնել, նախքան այդ հարցը կքարձաձայնվի գործի մասնակիցների կողմից[17]:

Դատավորը և շահի խնդիրը

ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի[18] 70-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ ի պաշտոնե իր (ex officio) լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն:

ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել,

---

[15] Hauschildt v. Denmark, Judgment of 24 May 1989, Eur. Ct. H.R., Series A, No. 154.

[16] Տե՛ս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը. Շահերի բախման կարգավորումը հանրային ծառայությունում (ուղեցույց), http://www.oecd.org/gov/ethics/48994419.pdf, էջ 52:

[17] Տե՛ս Consultative Council of European Judges, op. cit. note 15, էջ 30-32:

[18] Տե՛ս ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368): Ընդունվել է՝ 07.02.2018: Գործում է:

եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառությանը:

Ինքնաբացարկի հիմքերը ներառում են, ի թիվս այլոց, այն դեպքերը, երբ դատավորը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ նրա մերձավոր ազգականը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ.

Սույն հոդվածի իմաստով՝ տնտեսական շահ հասկացությունը չի ընդգրկում՝

1) ներդրումային կամ կենսաթոշակային ֆոնդի կամ այլ անվանական սեփականատիրոջ միջոցով բաց բաժնետիրական ընկերության բաժնետոմսեր կառավարելը, եթե դատավորը չգիտի այդ մասին,
2) բանկում ավանդ ունենալը, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը, վարկային կամ խնայողական միության մասնակից հանդիսանալը, եթե գործի ելքի արդյունքով այդ կազմակերպության վճարունակությանն էական վտանգ չի սպառնա,
3) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր ունենալը:

Դատավորի ինքնաբացարկի իրողությունն ուղղված է հանրության շրջանում արդարադատության իրականացման ողջ գործընթացի նկատմամբ վստահության պահպանմանը, որը առաջին հերթին բխում է դատական որոշումների անկողմնակալ և արդար լինելու համոզմունքից: Ինքնաբացարկի որոշման կայացմանը, բնականաբար, նախորդում է դատավորի կողմից հնարավոր կամ փաստացի շահերի բախման իրավիճակի արձանագրումը: Բավարար իրազեկվածության դեպքում համապատասխան քայլեր չձեռնարկելը կարող է հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման:

Դատավորի անաչառության հրամայականի համատեքստում իրենց հետաքրքրությամբ առանձնանում են այն իրավիճակները, երբ դատավորը քննում է իր համար վարկատու հանդիսացող բանկի կամ վարկային կազմակերպության շահերին առնչվող գործ:

Միջազգային փորձից հայտնի են կողմնակալության կամ նախապաշարմունքի չորս ձևեր՝ շահերի նախապաշարմունք (interest prejudice), հատուկ նախապաշարմունք (specific prejudice), ընդհանուր նախա-

պաշարմունք (generic prejudice) և կոնֆորմիստական նախապաշարմունք (conformity prejudice):

Դրանցից քննարկվող թեմային է առնչվում շահերի նախապաշարմունքը (interest prejudice): Այն կարող է առաջանալ դատավորի մեջ անձնական (ընտանեկան), հանրային, տնտեսական կամ այլ տեսակ շահ ունենալու դեպքում[19]: Մի շարք պետություններում կողմակալության այս ձևը համարվում է դատավորի՝ վարույթից հեռացման անվերապահ հիմք: Խոսքը, ըստ էության, շահերի բախման անհերքելի կանխավարկածի մասին է:

Սակայն ո՞ր դեպքերում այդ կապը պետք է նշանակալի ճանաչվի: Լուծումը միշտ չէ, որ ակնհայտ է և միանշանակ:

Օրինակ՝ Durham v. Lodal (1995)[20] գործում Հյուսիսային Կարոլինայի (ԱՄՆ) Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նախապաշարմունքը կարող է հիմնված լինել քաղաքային հարկատուների ֆինանսական շահերի վրա:

Դարեմ քաղաքում այրվել էին աղբատար 11 բեռնատարներ, ինչի հետևանքով վնասներ էին եղել, որոնք գերազանցել էին 1,5 մլն դոլարը: Պատասխանողը խնդրել էր գործը հանձնել այլ տեղանքի դատարան, քանի որ քաղաքային հարկ վճարող ատենակալները կարող էին կողմնակալ լինել տեղական հարկերի բարձրացման մտավախության պատճառով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[21] (այսուհետ՝ Օրենսգիրք) 887-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի[22] 38-րդ

---

[19] Տե՛ս Vidmar N. Case Studies of Pre- and Midtrial Prejudice in Criminal and Civil Litigation // Law and Human Behavior. Vol. 26. No. 1. February 2002. էջ 73-105:

[20] Տե՛ս City of Durham v. LoDal, Inc., et al. (1995), 120 N.C. App. 407:

[21] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրիրք, Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.-ին:

[22] Տե՛ս Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 29.08.1996 թ.-ին:

հոդվածի համաձայն՝ բանկը պարտավոր է իր գործունեության այնպիսի կանոններ սահմանել, որ բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին,

բ) բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն բանկի հաճախորդի նկատմամբ բանկի ստանձնած պարտավորություններին:

Հատկանշական է, որ հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները բանկային գաղտնիք են և պահպանվում են օրենքով. փաստացի վարկային պայմանագրով ծագած պարտավորական հարաբերությունները երրորդ անձանց՝ օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում հայտնի դառնալ չեն կարող:

Քննարկվող հարցի առնչությամբ ԱՄՆ-ի Դատավորների կարգապահական կանոնների վերաբերյալ խորհրդատվական հանձնաժողովը կարծիք է արտահայտել առ այն, որ, եթե գործի մասնակից հանդիսացող անձի կողմից դատավորին կամ նրա մերձավոր ազգականին մատուցվում է որոշակի ծառայություն, այսինքն՝ նրանք գտնվում են որոշակի պարտավորական հարաբերությունների մեջ, և այդ հարաբերությունները սովորական բնույթ են կրում, չեն զուգորդվում այնպիսի հանգամանքներով, որոնք կարող են դատավորի կայացնելիք որոշման վրա ազդեցության հիմնավոր կասկած առաջացնել, ինքնաբացարկի անհրաժեշտությունը բացակայում է: Մասնավորապես, Հանձնաժողովը ընդգծել է, որ ինքնաբացարկի որորշման կարիք չկա բանկերի կամ վարկային կազմակերպությունների մասնակցությամբ գործերի դեպքում, երբ խոսքը ավանդական ֆինանսական գործառնությունների մասին է, և բացակայում են անառանձնահատուկ հանգամանքներ (օրինակ՝ արտոնյալ պայմաններով վարկային պայմանագրի դեպքում):

Այսպիսով՝ վարկային պայմանագրի առկայությունը գործը քննող դատավորի և ֆինանսական գործառնություններ իրականացնող կազմակերպության միջև դատավորի կողմնակալության ողջամիտ կասկած չի կարող հարուցել, եթե նրանց միջև հարաբերությունները սովորական և ընդհանուր բնույթ են կրում: Բացի այդ՝ շահերի բախման իրավիճակը բացակայում է, քանի որ այս պարագայում դժվար է խոսել դատավորի՝ գործի ելքով գույքային շահագրգռվածության մասին:

Ինչպես արդեն նշվեց, դատավորի վարքագծի կանոններն ու անկողմնակալության երաշխավորմանը ուղղված նորմերը նպատակ ունեն ապահովելու հանրության շրջանում դատական իշխանության նկատմամբ վստահությունը: Դատական իշխանության բնականոն գործունեությունը կախված է նրա անկախության և անաչառության վերաբերյալ հանրության ընկալումից: Հիշյալ խնդրի առնչությամբ դատավորների հետ ունեցած անհատական զրույցները վկայում են այն մասին, որ նրանք նույնպես գիտակցում են, որ հանրության կարծիքը արդարադատության համակարգի կենսունակության համար նույնքան կարևոր է, որքան իրենց անկախ և անկողմնակալ գործունեությունը: Բացառելով շահերի բախման իրավիճակը և դատավորի ինքնաբացարկի անհրաժեշտությունը՝ միևնույն ժամանակ գտնում ենք, որ գործի մասնակիցներին դատավորի և մյուս մասնակցի միջև վարկային պայմանագրից բխող պարտավորական իրավահարաբերության մասին տեղեկացնելու անհրաժեշտությունը, այնուամենայիվ, առկա է: Դատավորի կողմից տվյալ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կնպաստի իր և դատական իշխանության անկախության և անկողմնակալության համոզման ամրապնդմանը գործի մասնակիցների մեջ:

Յուրաքանչյուր դատավոր միաժամանակ գույքային և անձնական իրավունքների կրող է, քաղաքացիական շրջանառության սուբյեկտ, որը, դատավորի հատուկ կարգավիճակից բխող սահմանափակումներով հանդերձ, կարող է իր ազատ կամահայտնությամբ մյուս սուբյեկտների հետ հավասար պայմաններում պարտավորական հարաբերությունների մեջ մտնել բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, օգտվել վերջիններիս կողմից մատուցվող ծառայություններից: Վերը շարադրվածն ինքնին կասկածի տակ չի կարող դնել դատավորի անկողմնակալությունը:

Դատավորների անկախությունը նրանց սեփական շահերի համար տրված բացարձակ իրավասություն կամ արտոնություն չէ: Այն բխում է իրավունքի գերակայության սկզբունքից և այն անձանց շահերից, ովքեր արդարադատություն են ակնկալում:

Բերենք օրինակ ներպետական դատական փորձից, երբ կողմերից մեկի մեջ կասկածներ են առաջացել դատավորի անկողմնակալ լինելու հարցում, քանի որ վերջինիս մերձավոր ազգականը տնտեսական շահ ուներ՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:

Թիվ ԵԿԴ/0313/02/09 քաղաքացիական գործով[23] հայցվորը վերաքննիչ բողոքում դիրքորոշում է հայտնել, որ հիմքեր ունի կասկածի տակ դնելու սույն քաղաքացիական գործով դատարանի, հանձին նախագահող դատավորի, անկողմնակալությունը, որի կապակցությամբ հայտնել է հետևյալը.

«ԲՏԱ ԲԱՆԿ ՓԲԸ-ի վարկային պորտֆելի հերթական մոնիտորինգի ընթացքում պարզվել է, որ բանկի վարկառու հանդիսացող և հերթական մոնիտորինգի ենթարկված կազմակերպություններից մեկը՝ «Ուկրման» ՍՊ ընկերությունը առնչվում է դատավոր Գ.Խ.-ի հետ: Մասնավորապես Գ.Խ.-ի որդին՝ Վ. Խ.-ն, «ՈՒկրման» ՍՊԸ 1/3 բաժնեմասով մասնակից է (համասեփականատեր):

«ՈՒկրման» ՍՊԸ և բանկի միջև 25.10.2007թ. կնքվել է գլխավոր վարկային համաձայնագիր, որով բանկն ընկերությանը տրամադրել է 300,000 (երեք հարյուր հազար) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկային գիծ, իսկ ընկերությունը պարտավորվել է վերադարձնել վարկը համապատասխան ժամկետում, վճարել տոկոսագումարներ վարկի օգտագործման դիմաց: Ի ապահովումն վարկային գլխավոր համաձայնագրով և այդ համաձայանագրի հիման վրա կնքված բազում ենթապայմանագրերով «Ուկրման» ՍՊԸ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝ 25.10.2007թ. բանկի և Գ.Խ.-ի կնոջ Հ.Գ.-ի միջև կնքվել է անշարժ գույքի գրավի թիվ 112-07-1 ԱԳ/Գ և թիվ 112-07-2 ԱԳ/Գ պայմանագրերը, որոնցով գրավադրվել է Երևանի, Մաշտոցի 37 շենքի թիվ 74 և 75 հասցեների անշարժ գույքը: Նկատի ունենալով, որ գրավադրվող գույքը հանդիսացել է Հ.Գ.-ի և Գ.Խ.-ի ընդհանուր համատեղ սեփականությունը, վերջինս 25.10.2007թ. տվել է նոտարի կողմից հաստատված իր համաձայնությունն ի ապահովումն «Ուկրման» ՍՊԸ վարկային պարտավորությունների Երևանի, Մաշտոցի 37 շենքի թիվ 74 և 75 հասցեների անշարժ գույքի նկատմամբ Հ.Գ.-ի կողմից գրավի գործարք կնքելուն:

2009 թ. սկզբից մինչ օրս «ՈՒկրման» ՍՊԸ կողմից իր վարկային պարտավորությունները պատշաճ չեն կատարվում: Միաժամանակ, բանկը «Ուկրման» ՍՊԸ բազմիցս առաջարկել է գրավի առարկայի հաշվին մարել վարկային պարտավորությունները:

Համաձայն հայցվորի արտահայտած դիրքորոշման՝ դատավորը, ելնելով պատասխանողի հանդեպ իր և իր ընտանիքի անդամների տնտե-

[23] Տե՛ս http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812258226:

սական շահերի առկայության հանգամանքից, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել, ինչը տեղի չի ունեցել: Դատավորի նման վարքագիծը կրում էր դիտավորյալ բնույթ, որի հետևանքով խախտվել է արդար և անկողմնակալ դատավարություն և վճիռ ստանալու պատասխանողի իրավունքը: Հիշյալը նաև հավաստվում է վճռում տեղ գտած և սույն վերաքննիչ բողոքում ներկայացված քաղաքացիական գործի ապացույցների, նյութական իրավունքի նորմերի խտրական, միակողմանի վերլուծությամբ, պատասխանողի բացատրությունների անտեսմամբ կամ խեղաթյուրմամբ և դատարանի այլ անհասկանալի գործողություններով: Այս ամենը ազդել է գործի ելքի վրա»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը չի անդրադարձել հայցվորի ներկայացրած ինքնաբացարկի հիմքերին, քանի որ ըստ դատարանի՝ դրանք որևէ կանխակալ կարծիք սույն գործով պատասխանողի նկատմամբ ձևավորել չեն կարող և սույն վեճին չեն վերաբերում: Կարծում ենք, որ նման դեպքերում դատարանը պետք է հիմնավոր պատճառաբանությամբ անդրադառնա կասկած հարուցող բոլոր փաստերին, որպեսզի դատավարության մասնակցի մեջ առաջանա կամ շարունակի պահպանվել վստահություն առ այն, որ իր գործը քննվում է անկողմնակալ դատարանի կողմից:

Հայաստանի Հանրապետության դատավորի վարքագծի կանոնների 3-րդ կանոնի[24] համաձայն՝ դատավորը պարտավոր է զերծ մնալ օրենսդիր և գործադիր մարմինների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների, **մասնավոր շահերի,** հասարակական կարծիքի և այլ կողմնակի ազդեցություններից, ճնշումներից, սպառնալիքներից և այլ միջամտությունից, ազատ լինել քննադատության մտավախությունից և անկախ մարդու համբավ ձեռք բերել անկողմնակալ դիտորդի համար[25]:

Մասնավոր շահերի ազդեցությունից զերծ մնալը նշանակում է, որ գործերը քննելիս և լուծելիս դատավորի համար պետք է նշանակություն չունենան որևէ անձի, խմբի, քաղաքական, հանրային, տնտեսական և այլ հաստատությունների շահերը, ցանկությունները, պահանջմունքները, տրամադրվածությունը: Դատավորը որևէ գործ չպետք է լուծի՝ ելնելով

---

[24] Տե՛ս Դ. Զ. Ավետիսյան, Տ. Ռ. Պետրոսյան, Հ. Ե. Սարգսյան, Վ. Գ. Ենգիբարյան, ՀՀ դատավորի վարքագծի կանոնագրքի մեկնաբանություններ (երկրորդ լրամշակված հրատարակություն) | Երևան, «Զանգակ», 2012:

[25] Տե՛ս Եվրոպայի խորհրդի R (2000) 10 հանձնարարական, https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=353945:

նպատակահարմարությունից. նա ամենից առաջ պարտավոր է ղեկավարվել օրենքով:

Փորձով առանձնացված են որոշակի դեպքեր, երբ դատավորին թույլատրված է ստանալ նվեր, վարկ կամ արտոնություն: Դրանք ստանալու սահմանափակումները, մասնավորապես, չեն տարածվում ֆինանսական կազմակերպությունների կողմից տրվող վարկերի ու փոխառությունների վրա, եթե վարկը կամ փոխառությունը տրվել է նույն պայմաններով, որոնցով դրանք սովորաբար տրվում են դատավոր չհանդիսացող և դատավորների հետ առնչություն չունեցող անձանց[26]:

Ինչպես արդեն նշվեց, դատավորի օբյեկտիվությունը նախապայման է նրա պարտականությունների պատշաճ կատարման համար: Այն արտահայտվում է ոչ միայն որոշման բովանդակությամբ, այլև դրա ընդունմանը ուղեկցող բոլոր ընթացակարգային արարքներով:

Դատավորը հայտարարում է գործի քննությանը մասնակցությունից ինքնաբացարկի մասին, եթե հնարավոր չէ գործով օբյեկտիվ որոշում կայացնել, կամ այն դեպքում, երբ օբյեկտիվ դիտորդը կարող է կասկածներ ունենալ դատավորի անաչառությանը: Այդպիսի դեպքերից է, երբ դատավորը կամ նրա ընտանիքի անդամները նյութապես շահագրգռված են քննվող գործի ելքով:

Քննարկվող հարցի կապակցությամբ ողջամիտ հարց է առաջանում, թե ո՛ր դեպքերում է նյութական շահագրգռվածությունը դատավորին բացարկ հայտնելու հիմք ծառայում: Որպես կանոն դատավորը պետք է ինքնաբացարկ հայտնի գործի նկատմամբ, որի որոշմամբ դատավորը (կամ նրա ընտանիքի անդամը) կարող է ստանալ նյութական օգուտ կամ նյութական կորուստ: Նման իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, եթե դատավորը ունի զգալի մասնաբաժին դատավարության մասնակից հանդիսացող ընկերությունում, և քննվող գործի արդյունքը իրապես կազդի դատավորի նյութական շահերի վրա: Եթե գործի կողմ է բորսայի գնանշման ցուցակներում ընդգրկված ընկերությունը, և դատավորն ունի համեմատաբար փոքր մասնաբաժին, դատավորը չի կարող զրկվել գործի քննությանը մասնակցելու իրավունքից, քանի որ գործի ելքը դժվար թե ազդի դատավորի շահերի վրա: Սակայն իրավիճակն այլ է, եթե դատական վեճի ելքից է կախված ընկերության կենսունակությունը կամ պահ-

[26] Տե՛ս Դ. Զ. Ավետիսյան, Տ. Ռ. Պետրոսյան, Հ. Ե. Սարգսյան, Վ. Գ. Ենգիբարյան, ՀՀ դատավորի վարքագծի կանոնագրքի մեկնաբանություններ (երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, «Զանգակ», 2012:

պանումը, և այդ դեպքում, կախված գործի ելքից, այն կարող է ազդել դատավորի շահերի վրա:

Նյութական շահագրգռվածության հասկացությունը չի տարածվում ակտիվների կամ բաժնեմասերի վրա, որոնք կարող է ունենալ դատավորը, օրինակ, փոխադարձ հիմնադրամների կամ ընդհանուր ներդրումների, ավանդների ֆինանսական հաստատություններում, փոխադարձ խնայողական ընկերություններում կամ վարկային միություններում, կամ կառավարական այն արժեթղթերի վրա, որոնց իրավատերը դատավորն է, եթե միայն դատական գործընթացը չի կարող էապես ազդել նման ակտիվների արժեքի վրա:

Խնդրո առարկա հիմնահարցի առնչությամբ քննարկենք արտասահմանյան փորձով հանդիպած իրավիճակ: Այսպես՝ դատավորի սպասարկած դատական տարածքում գտնվող բանկը, որը հաճախակի հայցադիմումներ է ներկայացնում դատարան, դատավորի կնոջը տրամադրել է վարկ՝ տարեկան 6 % տոկոսադրույքով այն դեպքում, երբ այլ անձանց նման վարկ տրամադրում է տարեկան 12 % տոկոսադրույքով: Ներկայացված իրավիճակում ակնհայտորեն առկա են շահերի բախում և նյութական շահագրգռվածություն:

Այսպիսով՝ դատավորի ինքաբացարկի անհրաժեշտություն առկա չէ, եթե դատավորը բանկային ծառայությունների սովորական հաճախորդ է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (համընդհանուր բանկային ծառայություններ) նման ընկերություններին կողմ հանդես գալու դեպքում, եթե չկան չլուծված վեճեր կամ հատուկ գործարքներ, որոնցում մասնակցում է դատավորը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նմանատիպ բոլոր դեպքերում դատավորը դրա մասին պետք է ծանուցի կողմերին՝ դատական նիստի արձանագրության մեջ իր հայտնած տեղեկությունները գրառելով:

Եզրակացություն

Ամփոփելով սույն աշխատանքի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

▪ «Բարեվարքություն» եզրույթը նշանակում է պարտականությունների ազնիվ և լիարժեք կերպով կատարում: Գործընթացն օժտված է բարեվարքությամբ (անխախտ ամբողջականությամբ), երբ ծառայում է իր նպատակին և գործում ավելի մեծ համակարգի սահմաններում, որի մասն է կազմում:

▪ Բարեվարքությունը ստվերվում է շահերի բախման իրավիճակում: Շահերի բախումը պետական ծառայության առաքելության իրականացման և այդ ծառայությունն իրականացնող անձի մասնավոր շահերի միջև բախում է, երբ մասնավոր շահը իր բնույթով այնպիսին է, որ կարող է ազդել այդ առաքելության իրականացման վրա կամ հնարավոր ազդեցության ողջամիտ կասկած առաջացնել:

▪ Դատավորի օբյեկտիվությունը նախապայման է նրա պարտականությունների պատշաճ կատարման համար: Այն արտահայտվում է ինչպես որոշման բովանդակությամբ, այնպես էլ դրա ընդունմանը ուղեկցող բոլոր ընթացակարգային արարքներով:

▪ Յուրաքանչյուր դատավոր միաժամանակ գույքային և անձնական իրավունքների կրող է, քաղաքացիական շրջանառության սուբյեկտ, որը, դատավորի հատուկ կարգավիճակից բխող սահմանափակումներով հանդերձ, կարող է իր ազատ կամահայտնությամբ մյուս սուբյեկտների հետ հավասար պայմաններում պարտավորական հարաբերությունների մեջ մտնել բանկերի և վարկային կազմակերպությունների հետ, օգտվել վերջիններիս մատուցած ծառայություններից, որպիսի հանգամանքն ինքնին կասկածի տակ չի կարող դնել դատավորի անկողմնակալությունը:

▪ Դատավորի ինքաբացարկի անհրաժեշտություն առկա չէ, եթե դատավորը բանկային ծառայությունների սովորական հաճախորդ է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար (համընդհանուր բանկային ծառայություններ) նման ընկերություններին կողմ հանդես գալու դեպքում, եթե չկան չլուծված վեճեր կամ հատուկ գործարքներ, որոնցում մասնակցում է դատավորը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նմանատիպ բոլոր դեպքերում դատավորը դրա մասին պետք է ծանուցի կողմերին՝ դատական նիստի արձանագրության մեջ իր հայտնած տեղեկությունները գրառելով:

▪ Նմանատիպ իրավիճակներում պետք է ելնել գործի փաստական հանգամանքներից՝ հաշվի առնելով, թե ինչ ազդեցություն կունենա գործի վերջնական լուծումը դատավորի կամ նրա մերձավոր ազգականի գույքային դրության վրա կամ ինչ առավելություններ կտա վերջիններին:

Գրականություն

1. Ավետիսյան Դ. Զ., Պետրոսյան Տ. Ռ., Սարգսյան Հ. Ե., Ենգիբարյան Վ. Գ., ՀՀ դատավորի վարքագծի կանոնագրքի մեկնաբանություններ (երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, «Զանգակ» 2012, 224 էջ:
2. Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 29.08.1996թ.-ին:
3. Եվրոպայի խորհրդի R (2000) 10 հանձնարարական, https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=353945:
4. ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368): Ընդունվել է՝ 07.02.2018: Գործում է:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգրիրք, Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.-ին:
6. European judges and prosecutors facing conflicts of interest, Semi-Final D, Judicial Ethics and Professional Conduct, Omšenie (Slovakia) 26th-30th June 2016, էջ 2:
7. Commission de réflexion pour la prévention des conflits d'intérêts dans la vie publique, Pour une nouvelle déontologie de la vie publique, presented by Jean-Marc SAUVE, 26 January 2011, էջ 14:
8. Measures For The Effective Implementation Of The Bangalore Principles Of Judicial Conduct (The Implementation Measures), Zambia, 2010.
9. International court of Justice, Construction of a Wall Dissenting Opinion of Judge Buerganthal (Order of 30 January 2004 was decided by 13 votes to 1).
10. Cubber v. Belgium, Judgment of 26 October 1984, Eur. Ct. H.R., Series A:
11. Hauschildt v. Denmark, Judgment of 24 May 1989, Eur. Ct. H.R., Series A, No. 154.
12. Managing Conflict Of Interest In The Public Service. Oecd Guidelines And Country Experiences, France, 2003.
13. Consultative Council of European Judges, op. cit. note 15.
14. Vidmar N. Case Studies of Pre- and Midtrial Prejudice in Criminal and Civil Litigation // Law and Human Behavior. Vol. 26. No. 1. February 2002.
15. City of Durham v. LoDal, Inc., et al. (1995), 120 N.C. App. 407.

Вопросы добропорядочности судей при рассмотрении дел банков или кредитных организаций, являющихся для них кредиторами

Геворг Барсегян
Марина Макян
Теймине Папоян

Резюме

Ключевые слова: *правила поведения, беспристрастность, конфликт интересов, материальный интерес, общественное доверие, самоотвод*

Целью данной статьи является выявление вопросов, касающихся добропорядочности судей, и представление возможных решений в том случае, когда они рассматривают дела банков или кредитных организаций, являющихся кредиторами для них, или аффилированных с ними лиц. Актуальность статьи обусловлена тем обстоятельством, что в результате усиления роли банков в условиях рыночной экономики, представители судебной власти также не остаются в стороне от кредитных обязательств, что в последнее время становится поводом для бурных обсуждений. Возникают проблемные вопросы, в частности, в связи с тем, должен ли судья представить самоотвод в том случае, когда рассматривает дела, затрагивающие интересы банков или кредитных организаций, являющихся кредиторами для него или аффилированных с ним лиц.

Обсуждение данного вопроса отличается своей особой важностью, поскольку он напрямую связан с доверием общества к судебной власти.

На основе проведённого исследования были сделаны выводы и представлены предложения.

Данная статья может быть полезна в подобных случаях с точки зрения обуславливания хода дальнейшего рассмотрения дела, обсуждения вопроса о необходимости самоотвода, а также может стать основой для дальнейших научных исследований по данной теме.

The Issues of the Ethics of Judges in Examining the Cases of Banks or Credit Organizations that are Creditors for them

Gevorg Barseghyan
Marina Maqyan
Tehmine Papoyan

Summary

Key words: *Rules of conduct, impartiality, conflict of interest, material interest, public credibility, self-withdrawal*

The purpose of this article is to identify issues related to the conduct of judges and introduce possible solutions in case they consider the cases of banks or credit organizations that are creditors for them or their affiliates. The relevance of the article is due to the fact that as a result of the strengthening the role of banks in conditions of market economy, the representatives of the judiciary are not left out of credit liabilities, which has recently become the subject of heated discussions. Problematic questions arise, in particular as to whether a judge should withdraw when considering cases involving Banks or Credit organizations that are creditors for them or their affiliates.

The discussion of this issue stands out for its special importance, as it is directly related to public credibility in the judicial branch.

Conclusions and suggestions were made based on the conducted research.

This article can be useful in cases of arranging the further investigation of the case, discussing the need for self-withdrawal, also it can be a basis for further scientific research on this topic.

Ներկայացվել է 28.08.2021 թ.
Գրախոսվել է 05.09.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.